

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
հուլիսի 9-ի N 1158 -Ն որոշման

Ն Կ Ա Ռ Ա Գ Ի Ր

**ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՀԱՄԱՁԳԵՍՏԻ ԵՎ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության դատախազության դատախազների համագգեստի և տարբերանշանների նկարագիրը:

2. Բարձրագույն դասային աստիճան ունեցող (արդարադատության պետական խորհրդականի, արդարադատության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան) դատախազների համագգեստը մուգ կապույտ գույնի կտորից է՝ բրդի բարձր տոկոսայնությամբ, իսկ 3-րդ դասի խորհրդականից մինչև արդարադատության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող դատախազներինը՝ մուգ կապույտ գույնի կիսաբրդյա կտորից:

**II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ  
ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՀԱՄԱՁԳԵՍՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

3. Արական սերի դատախազների համագգեստը կազմված է՝

1) **գլխարկ՝ հովարով՝** մուգ կապույտ կիսաբրդյա կտորից, մուգ կապույտ մահուղե գլխարկաբոլորքով: Գլխարկագագաթի եզրագծով և գլխարկաբոլորքի վերին եզրով անցնում է 2 մմ լայնքով մուգ կարմիր (բորդ) եզրաշերտ: Երկու կոճակներով ամրացվում է երկշերտ հյուսված կապը (քուղը)՝ գլխարկաբոլորքի վրա ցանցահյուսագարդով (N 2 ձև, նկար 2): Գլխարկաբոլորքի վրա առջևի կենտրոնական մասում ամրացվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշով գլխարկանշան (N 5 ձև, նկար 1): Գլխարկահովարը սև է՝ արտաքինից լաքապատ, իսկ ներսամասը՝ թափշա սև կտորից: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների գլխարկահովարից վերև՝

գլխարկաբոլորքի վրա, բացի ոսկեզույն լարահյուսից, ասեղնագործվում է դափնու ճյուղերի տեսքով 2 համաչափ ոսկեկար զարդ՝ 5-տոկոսանոց ոսկեթելերով, որի կենտրոնական մասում տեղադրված է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշով գլխարկանշան (N 2 ձև, նկար 1).

2) **գլխարկ՝ տոնական՝** կառուցվածքով և ձևով համապատասխանում է սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված նկարագրին.

3) **կոստյում,** որը ներառում է՝

3.1) **կիտել՝** մարմինը կիսազրկող մակերեսով, հաստ փողքերով, կարանովի թիկնամասով և փողքերի երկու կողային կտրվածքով, հետծալված օձիքով, օձիքի եզրերը մշակված են մուգ կարմիր (բորդո) մահուղե կտորից եզրագծով, օձիքի միացման կարում մշակված կախիչ, սովորական երկկարանի թևքերով, թևքերի վրա մշակված են ծալքեր (մանժետներ), որոնց վերին եզրերը կարված են մուգ կարմիր (բորդո) մահուղե կտորից եզրագծով, իսկ թևքածալքերի հետնամասում տեղադրված են երեքական Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշով 14 մմ ոսկեզույն մետաղյա համաձուլվածքից կոճակներ: Կիտելը կողքերից ունի կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրանաներ, երկու կողմերում ունի ծոցագրապաններ: Կիտելը միակոճկուն է՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշից պատկերով միաշարք երեք ոսկեզույն մետաղյա համաձուլվածքից կոճակներով: Զախ թևքին կարվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշով թևքանշան (N 7 ձև, նկար 2, N 4 ձև, նկար 1, N 3 ձև, նկար 3, 4): Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների կիտելի բոլոր կոճակները Հայաստանի Հանրապետության գինանշանի պատկերով են (N 7 ձև, նկար 1, N 4 ձև, նկար 1, N 3 ձև, նկար 1 և 2).

3.2) **տաքաս՝** ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի (մանժետների), 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր (բորդո) մահուղե կտորից եզրակարով, գուտին գոտեմակօղերով,

կոճկում է մետաղյա ամրակով, մեկ կոճակով և շղթայով, արտաքին գրանները թեք են (կողային), հետևամասի աջ կողմում կոճակով կոճկող կափոյրով գրան: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համար՝ 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր (բորդո) մահուղե կտորից եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է երկու մուգ կարմիր (բորդո) մահուղե կտորից վրակարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տարատի կողքի կարի ամրող երկայնքով.

**4) կոստյում՝ տոնական, որը ներառում է՝**

**4.1) տոնական կիտել՝** կառուցվածքով և ձևով համապատասխանում է սույն հավելվածի 3-րդ կետի 3.1-ին ենթակետով սահմանված նկարագրին, կարվում է սպիտակ գոյսի կիսաբրդյա կտորից (N 10 ձև, նկար 1, 2), իսկ բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համար՝ սպիտակ գոյսի կտորից՝ բրդի բարձր տոկոսայնությամբ.

**4.2) տոնական տաքատ՝** կառուցվածքով և ձևով համապատասխանում է սույն հավելվածի 3-րդ կետի 3.2-րդ ենթակետով սահմանված նկարագրին.

**5) տաքատ՝** կառուցվածքով և ձևով համապատասխանում է սույն հավելվածի 3-րդ կետի 3.2-րդ ենթակետով սահմանված նկարագրին.

**6) երկարաթև վերնաշապիկ՝** սպիտակ կտորից, ծալովի օձիքով (փափուկ կամ կոշտ), վերնաշապիկի օձիքի անկյուններում տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Վերնաշապիկի հետևամասը՝ վերին կտրվածքով, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, կոճկում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ երկար, կոճակով կոճկող թեզանիքներով (N 9 ձև, նկար 1, 2).

**7) կարճաթև վերնաշապիկ՝** սպիտակ կտորից է, ծալովի օձիքով, կրծքամասում կոճակով կոճկող ձևավոր կափոյրով և շերտակարով վրադիր գրաններ, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, հետևամասը՝ վերին կտրվածքով, կոճկում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ կարճ՝ շերտակարով,

ձախ թևքին կարվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշիշով թևքանշան, ուսերին՝ գոտեմակօղեր՝ ուսաղիրների համար (N 8 ձև, նկար 1, 2).

8) **Կոշիկ'** սև գույնի բնական կաշվից, երեսամասն ամրողական առաջամատով, կտրված հետևամասերով ամրացված գոտիով, հետևամասերի միացումն առաջամասերին՝ էլաստիկ ժապավենով, հիմնական և միջնաստաները՝ կտորից, կոշտ քթամասերը և հետևամասերը՝ արհեստական կաշվից: Ներքանը ձևավորված է պոլիուրետանից՝ սոսնձով միացման մեթոդով.

9) **Կիսաճտքավոր կոշիկ'** սև գույնի բնական կաշվից, երեսամասը՝ ամրողական առաջամատով, ճտքերի հետևամասերն ունեն երկարացված գոտի, լեզվակը միացված է առաջամասին և ճտքերի ստորին մասին, կոշիկը շղթայով կոճկվող, ներքանների եզրերը՝ վրաքաշվող մասերի հետ կարերով, միացման մեթոդը՝ սոսնձով.

10) **Վերարկու՝ ձմեռային'** մուգ կապոյտ մահուղե կտորից, ձևվածքն ունի կիանստած ուրվագիծ, օձիքը ծալովի է, հետևամասի ներքելում՝ բացվածքով: Վերարկուն միակոճկուն է՝ դեպի աջ կոճկումով, կոճկվում է չորս կոճակ օղակներով և գաղտնի կոճկվածքով: Թեկությունը՝ երկկարանի, ներկարված: Աստաղը՝ մետաքսյա, վերարկուի առաջամասի և հետևամասի աստաները մգդակարված են մեմբրանե տաքացուցիչով, երկու կողմերում՝ ներսից, ունի ծոցագրապաններ, երկու կողքերից գրապանները՝ ներկարովի՝ մշակված քառանկյուն կափոյրներով, երկարությունը մինչև ծնկները (N 12 ձև, նկար 1, 2): Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համար՝ մուգ կապոյտ, բարձր որակի մահուղե կտորից.

11) **անձրևանոց'** մուգ կապոյտ կտորից, անջրաթափանց, միակոճկուն՝ դեպի աջ կոճկումով, օձիքը՝ ծալովի, մեջքամասը՝ առանց կտրվածքի: Լանջափեշերը կոճկվում են հինգ կոճակ օղակներով և գաղտնի կոճկվածքով, լանջափեշերի վրա վերևսից թեր

շերտիկավոր ներկարված գրպաններ: Թիկունքը և առաջամասը՝ ուղիղ որվագծով, անձրևանցի երկարությունը մինչև ծնկները (N 11 ձև, նկար 1, 2).

12) **փողկապ**՝ մուգ կապույտ գույնի, ունի լայնացած որվագծով ձևվածք, պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում՝ սուր անկյունով, վերևում՝ հավաքովի հանգույց: Փողկապի վրա ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշան (N 6 ձև, նկար 1).

13) **փողկապի ամրակ**՝ երկճյուղանի մետաղյա ուկեզույն շերտիկ.

14) **գոտի**՝ կաշվե, սև, 50 մմ լայնությամբ, միաանցք.

15) **ձեռնոց**՝ կաշվե, սև, հինգմատնյա.

16) **վզարկու**՝ մուգ կապույտ տրիկոտաժն գործվածքից:

### III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՀԱՄԱՁԳԵՍՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4. Իգական սեռի դատախազների համազգեստը կազմված է՝

1) **զլխարկ՝ կանացի (պիլոտկա)**՝ մուգ կապույտ կիսաբրդյա կտորից: Վերծալված եզրակարերն ավարտվում են մուգ կարմիր (քորդո) մահուդե կտորից եզրակով (կանտով): Առջևի կենտրոնական ճակատային մասում ամրացվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշով զլխարկանշան (N 2 ձև, նկար 3).

2) **զլխարկ՝ տոնական՝** կառուցվածքով և ձևով համապատասխանում է սույն հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված նկարագրին.

3) **կոստյում**, որը ներառում է՝

3.1) **կիտել՝** կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետում նկարագրված կիտելին՝ առանց կողային երկու կտրվածքների, դեպի ձախ

կոճկումով՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշանի պատկերով միաշարք երկու ուկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներով, իսկ թևածալքերի հետնամասում տեղադրված են երկուական Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշով 14 մմ ուկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներ (N 7 ձև, նկար 4): Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների կիտելի բոլոր կոճակները Հայաստանի Հանրապետության գինանշանի պատկերով են (N 7 ձև, նկար 3).

3.2) **կիսաշրջազգեստ՝** ուղիղ կարվածքով է, երկկողմանի սեղմոններով, աստառով, գոտին՝ գոտեմակօղերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկում է մեկ կոճակով և շղթայով.

#### 4) **տոնական կոստյում,** որը ներառում է

4.1) **տոնական կիտել՝** կառուցվածքով և ձևով համապատասխանում է սույն հավելվածի 4-րդ կետի 3.1-ին ենթակետով սահմանված՝ նկարագրին՝ դեպի ձախ կոճկումով, կարվում է սպիտակ գույնի կիսաբրոյա կտորից (N 10 ձև, նկար 3, 4): Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համար՝ սպիտակ գույնի կտորից՝ բրդի բարձր տոլկոսայնությամբ.

4.2) **տոնական կիսաշրջազգեստ՝** կառուցվածքով և ձևով համապատասխանում է սույն հավելվածի 4-րդ կետի 3.2-րդ ենթակետով սահմանված՝ նկարագրին.

5) **կիսաշրջազգեստ՝** կառուցվածքով և ձևով համապատասխանում է սույն հավելվածի 4-րդ կետի 3.2-րդ ենթակետով սահմանված՝ նկարագրին.

6) **երկարաթև վերնաշապիկ՝** կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 3-րդ կետի 6-րդ ենթակետում նկարագրված վերնաշապիկին՝ դեպի ձախ կոճկումով, ձախ շերտակարի փոխարեն կարվում է աջ շերտակար (N 9 ձև, նկար 3).

7) **Կարճաթև վերնաշապիկ՝** կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 3-րդ կետի 7-րդ ենթակետում նկարագրված վերնաշապիկին՝ դեպի ձախ կոճկումով, ձախ շերտակարի փոխարեն կարվում է աջ շերտակար (N 8 ձև, նկար 3, 4).

8) **Վերարկու՝ ձմեռային՝** մուգ կապույտ մահուղե կտորից, ձևվածքն ունի կիա նստած ուրվագիծ, օձիքը ծալովի է, հետնամասի ներքևում՝ բացվածքով: Վերարկուն դեպի ձախ կոճկումով կոճկվում է չորս կոճակ օղակներով և գաղտնի կոճկվածքով: Թևքերը՝ երկկարանի, ներկարված: Աստառը՝ մետաքսյա, վերարկուի առաջամասի և հետևնամասի աստառները մգղակարված են մեմբրանե տաքացուցիչով, ձախ կողմում՝ ներսից, ունի ծոցագրապան, երկու կողքերից գրպանները՝ ներկարովի՝ մշակված քառանկյուն կափույրներով, երկարությունը մինչև ծնկները (N 12 ձև, նկար 3, 4): Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համար՝ մուգ կապույտ, բարձր որակի մահուղե կտորից.

9) **անձրևանց՝** մուգ կապույտ կտորից, անշրաթափանց, միակոճկուն՝ դեպի ձախ կոճկումով, օձիքը՝ ծալովի, մեջքամասը՝ առանց կտրվածքի: Լանջափեշերը կոճկվում են հինգ կոճակ օղակներով և գաղտնի կոճկվածքով, լանջափեշերի վրա վերևից թեք շերտիկավոր ներկարված գրպաններ: Թիկունքը և առաջամասը ուղիղ ուրվագծով, անձրևանցի երկարությունը մինչև ծնկները (N 11 ձև, նկար 3, 4).

10) **կոշիկ՝** սև գույնի բնական կաշվից, միջադիրը՝ բնական կաշվից, ներդիրը՝ կոշիկին համապատասխան կաշվից: Ներբանը ձևավորված է պոլիուրեթանից՝ սոսնձով միացման մեթոդով: Կրունկը՝ մինչև 5 սմ բարձրության, փայթաթված երեսամասի նյութով.

11) **կիսաճտքավոր կոշիկ՝** սև գույնի բնական կաշվից, բարձրությունը՝ 25-30 սմ, ներդիրը՝ կիսաճտքավոր կոշիկին համապատասխան կաշվից, միջադիրը՝ բայկա կամ համանման, կոշիկը շղթայով կոճկվող, կրունկը՝ մինչև 5.5 սմ բարձրության.

12) **փողկապ'** մուգ կապույտ կտորից, երկու շեղանկյունաձև՝ լայն, կարճ և նեղ, երկարավուն կտորներից, որի նեղ, երկարավուն կտորը գտնվում է լայն, կարճ կտորի վրա, հանգույցի ներքևի կենտրոնական մասում ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշանը (N 6 ձև, նկար 2).

13) **գոտի՝** կառուցվածքով և ձևով համապատասխանում է սույն հավելվածի 3-րդ կետի 14-րդ ենթակետով սահմանված նկարագրին.

14) **ձեռնոց՝** կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 3-րդ կետի 15-րդ ենթակետում նկարագրված ձեռնոցին.

15) **Վզարկո՛ւ** կառուցվածքով և ձևով նման է սույն հավելվածի 3-րդ կետի 16-րդ ենթակետում նկարագրված վզարկուին:

#### IV. ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5. Դատախազների տարբերանշաններն են՝ գլխարկանշանները, թևքանշանն ու ուսադիրները:

6. Թևքանշանը վահանաձև է, երիզված մուգ կարմիր (քորդո) 2 մմ երիզով, Հայաստանի Հանրապետության խորհրդանշից պատկերով՝ 11 սմ x 7.5 սմ մուգ կապույտ ֆոնի վրա (N 4 ձև, նկար 1): Թևքանշանը կրում են ձախ թևքի արտաքին կողմին, թևքի վերին կետից մինչև նշանը՝ 90 մմ հեռավորությամբ:

7. Հայաստանի Հանրապետության դատախազների դասային աստիճանների տարբերանշաններն ուսադիրներն են, որոնք լինում են՝

1) կարովի (կիտեղի), տեղադրվում են թևքատեղադրման գծից ուսի կարի վրա այնպես, որ ուսի կարը համընկնի ուսադիրի երկայնական առանցքային գծի հետ (N 1 ձև, նկար 2, 4 և 6).

2) հանովի (կարճաթև վերնաշապիկի վրա), ամրացվում են ուսերի գոտեմակօղերին (N 1 ձև, նկար 1, 3 և 5):

8. Ուսադիրը կիսափափուկ, ձգված վեցանկյուն է, երկարավուն զուգահեռ կողմերով, որոնց ներքևի վերջնամասն ուղղանկյուն է: Ուսադիրները մուգ կարմիր մահուլի վրա մշակված մուգ կապույտ գոյնի նախշազարդ դաշտով են, եզրերը մուգ կարմիր գոյնի մակաշերտով: Կարովի ուսադիրի եզրերը, բացի ստորինից, երիզվում են 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր մահուլի գործվածքով: Ուսադիրներին, ըստ դասային աստիճանի, տեղադրվում են մետաղե ուկեգույն աստղեր (բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների ուսադիրների աստղերն ասեղնագործվում են), իսկ վերին ծայրից 15 մմ հեռավորության վրա տեղադրվում է 14 մմ տրամագծով ուկեգույն կոճակ՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշիչի պատկերով, իսկ բարձրագույն դասային աստիճան ունեցողներին՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով:

9. Դատախազների կիտելի աջ և ձախ օձիքների վրա ամրացվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանշիշով տարբերանշան (N 5 ձև, նկար 4): Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների կիտելի աջ և ձախ օձիքների վրա ասեղնագործվում է ուկեզօծ դափնու ճյուղերով զարդանախշ (N 5 ձև, նկար 3):

10. Դատախազների դասային աստիճանների տարբերանշանները (ուսադիրներ) տեղադրվում են (կարվում են) կիտելի, վերնաշապիկի աջ և ձախ ուսակարերի վրա (N 7 ձև, նկար 1, 2, 3 և 4, N 8 ձև, նկար 1, 2, 3 և 4):

11. Արդարադատության պետական խորհրդականի ուսադիրների վրա ասեղնագործվում է ուկեզօծ հնգաթև աստղ՝ 25 մմ տրամագծով՝ աստղի թևերի միջև ասեղնագործված յոթական ճառագայթներով (N 2 ձև, նկար 4):

12. Արդարադատության 1-ին դասի պետական խորհրդականի ուսադիրների վրա ասեղնագործվում է 3 ուսուցիչի ուսկեզույն հնգաթև աստղ՝ յուրաքանչյուրը 22 մմ տրամագծով, արդարադատության 2-րդ դասի պետական խորհրդականի ուսադիրների վրա՝ 2 ուսուցիչի ուսկեզույն հնգաթև աստղ՝ յուրաքանչյուրը 22 մմ տրամագծով, արդարադատության 3-րդ դասի պետական խորհրդականի ուսադիրների վրա՝ մեկ ուսուցիչի ուսկեզույն հնգաթև աստղ՝ 22 մմ տրամագծով (N 2 ձև, նկար 5):

13. Արդարադատության 1-ին, 2-րդ, 3-րդ դասերի խորհրդականների ուսադիրների վրա 2 մուգ կարմիր մակաշերտ է: Արդարադատության 1-ին դասի խորհրդականի ուսադիրներին ամրացվում է 3 ուսկեզույն հնգաթև աստղ՝ յուրաքանչյուրը 20 մմ տրամագծով, արդարադատության 2-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ 2 հնգաթև ուսկեզույն աստղ՝ յուրաքանչյուրը 20 մմ տրամագծով, արդարադատության 3-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ մեկ հնգաթև աստղ՝ 20 մմ տրամագծով (N 2 ձև, նկար 6):

14. 1-ին, 2-րդ, 3-րդ դասերի խորհրդականների ուսադիրների վրա՝ մեկ մուգ կարմիր մակաշերտ է: 1-ին դասի խորհրդականի ուսադիրներին ամրացվում է 4 ուսկեզույն աստղ՝ յուրաքանչյուրը 14 մմ տրամագծով, 2-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ 3 ուսկեզույն աստղ՝ յուրաքանչյուրը 14 մմ տրամագծով, 3-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ 2 ուսկեզույն աստղ՝ յուրաքանչյուրը 14 մմ տրամագծով (N 2 ձև, նկար 7):

15. Աստղերը ճառագայթներից մեկով ուղղված են դեպի ուսադիրների վերին եզրը:

16. Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համագլեստի բոլոր տարբերանշաններն ասեղնագործվում են 5-տոկոսանոց ուսկեթելերով:

## N 1 ձև



Նկար 1

Արդարադատության պետական խորհրդականի  
վերնաշապիկի ուսադիր



Նկար 2

Արդարադատության պետական խորհրդականի  
կիտելի ուսադիր



Նկար 3. Արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականից մինչև արդարադատության առաջին դասի պետական խորհրդականի դասային աստիճան ունեցող դատախազի վերնաշապիկի ուսադիրներ



Նկար 4. Արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականից մինչև արդարադատության առաջին դասի պետական խորհրդականի դասային աստիճան ունեցող դատախազի կիսելի ուսադիրներ



Նկար 5. Ուսադիր երրորդ դասի խորհրդականից մինչև արդարադատության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող դատախազի վերնաշապիկի համար



Նկար 6. Ուսադիր երրորդ դասի խորհրդականից մինչև արդարադատության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող դատախազի կիտելի համար

## N 2 ձկ



Նկ 1



Նկ 2



Նկ 3

Գլխարկներ տղամարդու և կանացի



25 մմ  
Նկ 4



22մմ  
Նկ 5



20մմ  
Նկ 6



14մմ  
Նկ 7

Աստղեր տարրերանշանների համար

### N 3 ձև



Կոճակները բարձրագույն դասային աստիճան ունեցող  
դատախազի համազգեստի համար



Կոճակները երրորդ դասի խորհրդականից մինչև արդարադատության  
առաջին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող  
դատախազի համազգեստի համար

N 4 ձկ




Նկար 1. Հայաստանի Հանրապետության դատախազության  
դատախազի համազգեստի թևքանշան

## N 5 ձկ

### Գլխարկանշաններ



### Այլ տարբերանշաններ



## N 6 ձև



Նկար 1. Փողկապ տղամարդու



Նկար 2. Փողկապ կանացի

N 7 ձև



Նկար 1



Նկար 2



Նկար 3



Նկար 4

**Արական և իգական սեղի  
դատախազների ամենօրյա համազգեստ**

## N 8 ձև



Նկար 1



Նկար 2



Նկար 3



Նկար 4

Արական և իգական սեռի դատախազների  
ամենօրյա կարճաթև վերնաշապիկ

## N 9 ձև



Նկար 1



Նկար 2



Նկար 3

Արական և իգական սեղի դատախազների  
ամենօրյա երկարաթև վերնաշապիկ

## N 10 ձև



Նկար 1



Նկար 2



Նկար 3



Նկար 4

Արական և իգական սեռի  
դատախազների տոնական համազգեստ

N 11 ձև



Նկար 1



Նկար 2



Նկար 3



Նկար 4

Արական և իգական սեղի դատախազների  
անձրևանոց

N 12 ձև



Նկար 1

Նկար 2

Նկար 3

Նկար 4

**Արական և իգական սեռի դատախազների  
ձմեռային վերաբերություն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
հուլիսի 9-ի N 1158 - Ն որոշման

## Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

### ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ

- Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշը դատախազության համակարգի անհատականացման նշանն է:
- Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի տարրերն են՝ վահանը, կշեռքը և սուրբ:
- Վահանը հասարակության և մարդու իրավունքների պաշտպանության, կշեռք՝ արդարության, սուրբ՝ պատժի և դատաստանի ապահովման խորհրդանիշերն են:
- Վահանն ուղղահայաց հնգանկյուն է, որի վերևի մասում պատկերված է կշեռքը, իսկ կենտրոնում՝ Հայաստանի Հանրապետության դրոշը: Դրոշի վրա տեղադրված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Վահանից դուրս, վերևի մասում, երևում է սրի բռնակը, իսկ ներքևից դուրս է գալիս սրի շեղը:
- Վահանը երիզված է մուգ կապույտ ժապավենով, որի վրա ուկեգույն տառերով մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ»:
- Խորհրդանիշի լայնության և երկարության հարաբերությունն է՝ 1: 1,3:



ՀՀ դատախազության խորհրդանիշ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԴԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 3  
 ՀՀ կառավարության 2020 թվականի  
 հուլիսի 9-ի N 1158 -Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ  
 ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության դատախագության համազգեստը տրամադրվում է հետևյալ ժամկետներով՝ համաձայն աղյուսակի.

Աղյուսակ

NN ը/կ	Անվանումը	Քանակը	Կրելու ժամկետները (տարի)
1.	Գլխարկ՝ հովարով (բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախագների)	1 հատ	2
2.	Գլխարկ՝ հովարով	1 հատ	2
3.	Գլխարկ՝ կանացի	1 հատ	2
4.	Կոստյում (բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախագների)	1 հատ	2
5.	Կոստյում	1 հատ	1
6.	Կոստյում՝ տոնական	1 հատ	4
7.	Տարաս	1 հատ	1
8.	Կիսաշրջազգեստ	1 հատ	1
9.	Վերարկու՝ ձմեռային (բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախագների), բարձր որակի մահուդից	1 հատ	4
10.	Վերարկու՝ ձմեռային, մահուդից	1 հատ	4
11.	Ասձրևանոց	1 հատ	4
12.	Վերնաշապիկ՝ երկարաթև (սպիտակ կտորից)	2 հատ	1
13.	Վերնաշապիկ՝ կարճաթև (սպիտակ կտորից)	2 հատ	1
14.	Փողկապ	1 հատ	1
15.	Կոշիկ (բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախագների)	1 հատ	1
16.	Կոշիկ	1 հատ	1
17.	Կիսաճտքավոր կոշիկ	1 հատ	4
18.	Ձեռնոց	1 հատ	4
19.	Գոտի	1 հատ	1
20.	Փողկապի ամրակ	1 հատ	1
21.	Վզարկու	1 հատ	4
22.	Ուսադիր (բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախագների)	1 զույգ	2

23.	Ուսադիր (քարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների, կարճաթև վերնաշապիկի)	1 զույգ	1
24.	Ուսադիր (կիտելի)	1 զույգ	1
25.	Ուսադիր (կարճաթև վերնաշապիկի)	1 զույգ	1
26.	Ուսադիր (տոնական կիտելի համար)	1 զույգ	4
27.	Օձիքի տարրերանշան	1 զույգ	1
28.	Օձիքի տարրերանշան (տոնական կիտելի համար)	1 զույգ	4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԴԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ